



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ  
ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ  
ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ  
15 ՀՈՒՆԻՍԻ 2013ԹՎԱԿԱՆ

Հ.Հ. ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ  
ՂԵԿԱՎԱՐԻ 2013Թ-Ի ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ  
ԲՅՈՒՋԵՅԻ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ

Հարգելի պարոն՝ Ա. Ղուկասյան

Հարգելի ավագանու անդամներ և հյուրեր, Ձեզ եմ ներկայացնում Արմավիրի մարզի Մրգաստանի գյուղական համայնքում 2013թ. առաջին կիսամյակի բյուջեի կատարման ընթացքի մասին հաղորդում, բյուջետային օրենսդրությամբ սահմանված ժամկետում կատարված աշխատանքների վերաբերյալ:

Տարեսկզբին մշակվել և հաստատվել է տարեսկզբի ազատ մնացորդը: Մշակվել է Մրգաստանի գյուղական համայնքի աշխատակազմի օրինակելի կանոնադրությունը, համաձայն «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի պահանջների, որը հաստատվել է Մրգաստանի համայնքի ավագանու 2013թ. ապրիլի 22-ի, թիվ 2/1 արտահերթ նիստի, թիվ 12-Ն որոշմամբ և ուղարկվել է Արդարադատության նախարարություն փորձաքննության:

Մեր կողմից կատարվել է նաև բյուջեի 2 փոփոխություն, որը նույնպես ուղարկվել է փորձաքննության:

Իմ հանձնարարությամբ աշխատակազմի քարտուղարի կողմից իրականացվել է գյուղապետարանի աշխատակազմի ամխափան աշխատանքը:

Գյուղապետարանի աշխատակազմը բաղկացած է 13 հիմնական հաստիքային միավորից, որից 6-ը համայնքային ծառայողներ են, 2-ը հայեցողական պաշտոն է, մնացածը քաղաքացիական ծառայողներ են:

Աշխատակազմի քարտուղարի կողմից կատարվել է հետևյալ աշխատանքները՝

Համայնքի ավագանու նիստերի նախապատրաստումը, ավագանու անդամների ծանուցումը, նիստերի արձանագրումը և նիստի ներկա ավագանու անդամների կողմից արձանագրության վավերացումը:

Կազմակերպվել է քաղաքացիների ընդունելություն համայնքի ղեկավարի, աշխատակազմի քարտուղարի և ավագանու անդամների մոտ: Ընդունելության եկած քաղաքացիներից 17 դիմումներին տրվել է սպառիչ պատասխան, դրանցից 3-ը եղել են անձնական բնույթի, 14-ը սոցիալական բնույթի: Ընդհանուր առմամբ, որպես սոցիալական օգնություն բնակչությանը տրվել է՝ 540 000 /հինգ հարյուր քառասուն հազար/ դրամ:

Ղեկավարվելով «ՏԻՄ» Հ.Հ. օրենքի պահանջներով իմ կողմից իրականացվել է օրենքով սահմանված մի շարք պարտադիր լիազորություններ: Հաշվետու ժամանակաշրջանում վերահսկողություն է իրականացվել հողի հարկի և գույքահարկի հարկատեսակների հավաքագրման աշխատանքների նկատմամբ:

Հողի հարկը առաջին կիսամյակի կտրվածքով կազմում է՝ 439 400 /չորս հարյուր երեսունհինգ հազար չորս հարյուր դրամ/:

Գույքահարկ շենք շինությունների համար՝ 3133 /երեք հազար հարյուր երեսուներեք/ դրամ:

Փոխադրամիջոցների համար՝ 303 300 /երեք հարյուր երեք հազար երեք հարյուր/ դրամ:

Տեղական տուրքերի դիմաց՝ 13 500 /տասներեք հազար հինգ հարյուր/ դրամ:  
Ոչ հարկային եկամուտների դիմաց հավաքագրվել է՝ 33 000 /երսուն երեք հազար/ դրամ:

1.Քաղաքացիների տնտեսվարող սուբյեկտների իրավունքների պաշտպանության բնագավառում իմ կողմից իրականացվել է համայնքի ղեկավարի պարտադիր լիազորություններ:

1/1.Ֆինասների բնագավառում ավագանու հաստատմանն է ներկայացվել բյուջեի երկու փոփոխություն, որը փորձաքննության է ուղարկվել Արդարադատության նախարարություն և մարզպետարան օրենքով սահմանված կարգով:

1/2.Տրվել է ֆինանսական օգնություն, մահացածների ընտանիքների:

2.Քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառում՝ կատարվել են հետևյալ աշխատանքները.

2/1.Համայնքում աղբահանությունը անցել է բնականոն վիճակի, շաբաթական երկու անգամ, կնքված պայմանագրի հիման վրա էջմիածնի քաղաքապետարանի բնակ-կոմունալ վարչությունը կատարում է կենցաղային աղբի տեղափոխություն:

Համայնքում ներդրվել է աղբահանության շնչահարկով հարկվող տեղական տուրքը, փաստացի բնակվող մեկ շնչին 50 դրամ վարձավճարով:

Աշխատանքները բնականոն ընթացքի մեջ են, հավաքագրվել և համայնքի բյուջե է մուտքագրվել 45 000 /քառասուն հինգ հազար/ դրամ:

3.Համայնքում գործող գերեզմանատան աշխատանքները իմ կողմից վերահսկվում են:

4. Սահմանված կարգով բնակչությանը իրազեկվել է ծրագրվող քաղաքաշինական փոփոխությունների, կառուցապատման հետ կապված օրենսդրական փոփոխությունների մասին:Տրվել է մեկ շին. բույլտվություն գյուղի միջնակարգ դպրոցի կաթսայատան և լոկալ ջեռուցման համակարգի կառուցման համար:

5.Հողօգտագործման բնագավառում՝  
Իրականացվել է վերահսկողություն համայնքի վարչական սահմաններում գտնվող հողերի նպատակային օգտագործման և հողօգտագործողների կողմից հողային օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ:

Կատարվել է նաև հողաչափական աշխատանքներ, բնակիչների դիմումների հիման վրա:

Մշակվել և Կադաստրի պետական տարածքային բաժին է ներկայացվել հողի հաշվեկշիռը, որը հաստատվել է համայնքի ավագանու կողմից:

6.Կրթության և մշակույթի բնագավառում իմ կողմից մշտական ուշադրության է արժանանում գյուղի միջնակարգ դպրոցը:Գյուղի դպրոցում իրականացվող միջոցառումները արժանանում է մեր աջակցությանը:

Ֆինասական աջակցություն է ցուցաբերվել դպրոցի ավարտական դասարանին «Վերջին զանգի» միջոցառումները կազմակերպելու համար:

Համայնքում կազմակերպվել է միջոցառումներ նվիրված Հանրապետության օրվան:Այդ օրը համայնքի մեծահասակներին նվիրվեց արժեքավոր նվերներ և կազմակերպվեց միջոցառում:

Համայնքում իրականացվել է վերանորոգման աշխատանքներ, մասնակի վերանորոգվել է գյուղ մտնող ճանապարհը:

7. Գյուղատնտեսության բնագավառում՝ աջակցել ենք գյուղատնտեսական աշխատանքների կազմակերպմանը, գյուղացիներին բաժանվել է պարարտանյութ, մեկ պարկը 6000/վեց հազար/ դրամ արժողությամբ:

Բերքը համապատասխան կազմակերպություններին համնձնող գյուղացիներին, տրվել են համապատասխան տեղեկանքներ, որպեսզի գյուղացին կարողանա անարգել տեղափոխի իր բերքը:

Գյուղապետարանի ամենօրյա հսկողության տակ է գտնվում գյուղի հուշարձանը, որի տարածքը խնամվում և պահպանվում է սեզոնային աշխատակցի կողմից:

Համայնքի ղեկավարի համապատասխան որոշմամբ, գյուղի հուշարձանը ամրագրվել է միջնակարգ դպրոցին և այսուհետ դպրոցի աշակերտները և ուսուցչական կոլեկտիվը ևս ներգրավվել է հուշարձանի պահպանման և խնամման գործին:

Գյուղում գործում է բուժկետ, 2 բուժաշխատողով:

Համայնքում գործում է «սուրբ Հովհաննես» եկեղեցին, որտեղ ամեն ուրբաթ տեղի է ունենում ժամերգություն:

Համայնքում առկա է հիմնախնդիրներ, որոնք պահանջում են հրատապ լուծում:

Համայնքը չունի նախադպրոցական հիմնարկ /մանկապարտեզ/:

Համայնքի փողոցները գտնվում են անմխիթար վիճակում:

Դեռևս համայնքում կան անտուններ, որոնք բնակվում են վազոն տնակներում: